

– Դու, իշխան, ուրեմն համամիտ ես այս խորհրդիս:

– Բոլոր մտքով ու սրտով:

– Եւ կը հաւատա՞ս, որ կաթողիկոսը ընդունի իմ առաջարկութիւնս:

– Մեր եկեղեցականաց թուլութիւնը եւ անհոգութիւնը ճանչելով կը կասկածիմ, բայց չեմ կարծեր թէ մերժէ, կը խոստանայ, հաւանութիւն ցոյց կուտա...

Այս միջոցիս Գուրգէն էլ իջեր էր ձիւն եւ երկու հոգի այսպէս խօսելով կ'երթային եւ Յովակ իւր տիրոջ ետեւէն հանդարտ կը քայլէր. երբ Յովնան բոլորովին իւր սովորութեան հակառակ հարցական ձեւ առնելով՝

– Իսկ դու ո՞ւր կ'երթաս իշխան, – ըսաւ:

– Բագրեւանդ կ'երթամ՝ քեռուոյս՝ Զուրդիկ իշխանին:

– Այդ մարդը Մամիկոնեան է. բայց Վարդան չէ:

– Դու Ղեւոնդ մը միայն գտիր, ես քեզի տասը Վարդան կը գտնեմ:

– Ճշմարիտ որ, եթէ Ղեւոնդը գտնեմ՝ Վարդան մեծը նաեւ չեմ փնտրեր:

Գուրգէն շուտ մը յիշեց այդ մարդուն խստութիւնը ընդդէմ նախարար եան խումբին, եւ ամենեւին պատասխան չի տալով շարունակեց ճամփան, մինչեւ որ մութը սկսաւ եւ գիւղը երեւցաւ: Երբ հասան ճամփան, որ գիւղին յատուկ էր, տեսաւ իշխանը, որ իւր ընկերը չէր գատուէր մեծ պողոտայէն, այլ կուգէր դէռ շարունակել:

– Յովնան եղբայր, մի՛ գուցէ իշխանագուն մարդու հետ նոյն տան, նոյն գիւղի մէջ միատեղ չի գտնուելու համար ուզես ճամփադ շարունակել: